

ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

<< _____ >> _____ 2016թ.

թիվ _____

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՎԱՆԱԶՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՃԱԽՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԾՆՈՂԱԿԱՆ ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐԻ ԱՄՍԱԿԱՆ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2007 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 7-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վանաձորի համայնքապետարանի կրթության և մշակույթի բաժնի պետի զեկուցագիրը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 19-րդ կետով, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի բ/ ենթակետով՝ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Սահմանել Վանաձորի համայնքային ենթակայության նախադպրոցական ուսումնական հաստատություններ հաճախող երեխաների ծնողական վարձավճարների 2016 թվականի ամսական դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
2. Ուժը կորցրած ճանաչել Վանաձոր համայնքի ավագանու 2007 թվականի փետրվարի 15-ի «Համայնքի սեփականությունը հանդիսացող մուր-մանկապարտեզներում ծնողական վարձավճարներ սահմանելու մասին» թիվ 7-Ն որոշումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է 2016 թվականի հուլիսի 01-ից: